

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Կազմված է 20.12.2010թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ

ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԿՈՂՄԻՑ՝
20 դեկտեմբերի 2010թ. կայացած նիստի որոշմամբ
(արձանագրություն թիվ 6)

Ավանդների հատուցումը երաշխավորող
հիմնադրամի տնօրեն՝

_____ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ " 22. 03.2005թ.
գրանցման թիվ 222 160.00473
վկայական 03 Ա 068069

ԹԻՎ 001.3 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳՐԱՆՑՎԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ "19..." ...01... 2011թ.

պետական ռեգիստրի ղեկավար՝

_____ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ)
լրացումները

Հիմնադրամի կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումները

1. Հիմնադրամի կանոնադրության 11.1.28 կետից հետո լրացնել 11.1.29 կետը հետևյալ բովանդակությամբ՝ «11.1.29 Խորհուրդն առնվազն հինգ տարին մեկ քննարկում է երաշխավորված ավանդի չափերի վերանայման հարցը՝ սույն կանոնադրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխանության տեսանկյունից».

2. Հիմնադրամի կանոնադրության 11.1.29 կետից հետո լրացնել 11.1.29.1 կետը հետևյալ բովանդակությամբ՝ «11.1.29.1 սույն կանոնադրությամբ սահմանված չափորոշիչներն են՝ Օրենքով սահմանված երաշխավորված ավանդի առավելագույն չափի և Հայաստանի Հանրապետությունում մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) հարաբերակցությունը, Հայաստանի

Հանրապետության բանկային համակարգում երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների ընդհանուր թվի մեջ երաշխավորված ավանդի չափը չգերազանցող ավանդատուների թվի կշիռը, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում ֆիզիկական անձանց բանկային ավանդների ընդհանուր գումարի մեջ երաշխավորված ավանդների գումարի կշիռը».

3. Հիմնադրամի կանոնադրության 11.1.29.1 կետից հետո լրացնել 11.1.30 կետը հետևյալ բովանդակությամբ՝ «11.1.30 Երաշխավորված ավանդի չափերի պահպանման կամ փոխարինման վերաբերյալ Կենտրոնական բանկին առաջարկություն ներկայացնելու մասին որոշում կայացնելիս Խորհուրդը հաշվի է առնում նաև Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի իրավիճակը, ինչպես նաև ավանդների երաշխավորման ոլորտում համաշխարհային զարգացումները»:

Սույն լրացումները հանդիսանում են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի 22.03.2005թ. գրանցված կանոնադրության անբաժանելի մասը.